

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

2010 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

Ստեփանակերտ 2009

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներածություն.....	3
1. Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը.....	3
2. Կարգավորման միջոցառումները և մեխանիզմները	10
3. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ.....	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ծրագիրն ապահովում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 2007-2009 թվականների տարեկան գործունեության ծրագրերի շարունակականությունը:

Ծրագրի նշակման համար իրավական հիմք են հանդիսացել «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթները և իրավական այլ ակտեր:

Ծրագրի նպատակն է 2010 թվականի ընթացքում շարունակել և զարգացնել պետական քաղաքականության մաս հանդիսացող կարգավորման գործառույթը, որը կոչված է պաշտպանելու և հավասարակշռելու կարգավորվողների և սպառողների շահերը, նպաստելու երկրի տնտեսության զարգացման գործընթացին, քաղաքակիրթ շուկայի ձևավորմանը, ապահովելու բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր և այլն:

Ծրագրի նպատակներից ելնելով՝ համառոտ ներկայացվել են կարգավորվող ոլորտի իրավիճակը և առկա հիմնախնդիրները, սահմանվել են կարգավորման միջոցառումները, այդ թվում նաև Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովման, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության, Հանձնաժողովի կառավարման համակարգի կատարելագործման, կադրերի համալրման, պատրաստման և որակավորման բարձրացման հարցերին առնչվող միջոցառումները, դրանց իրականացման մեխանիզմները:

1. Հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովն իրականացնում է պետական քաղաքականության մաս հանդիսացող **կարգավորումը**, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Կարգավորվող ոլորտում ընդգրկված են՝ *էներգետիկայի* բնագավառը, *ջրային համակարգը*, *հեռահաղորդակցության*, այդ թվում՝ *հեռուստատեսության և ռադիոյի* բնագավառը, *տնտեսական մրցակցության պաշտպանության* բնագավառը, *փոստային կապի* բնագավառը և *տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման* բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով:

Հանձնաժողովը կարգավորվող ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորում է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով և Ջրային օրենսգրքով, «էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով (այսուհետ՝ նաև ճյուղային օրենքներ):

Կարգավորման հիմնական սկզբունքներն են՝

ա) կարգավորման իրականացումն ինքնուրույն պետական մարմնի կողմից՝ օրենքներով լիազորված իրավասությունների շրջանակում:

բ) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը:

գ) կարգավորման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը հասարակության համար:

դ) սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը:

ե) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը:

զ) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց՝ կարգավորման շրջանակների սահմանափակումը:

Հանձնաժողովը կարգավորվող ոլորտում իրականացնում է հետևյալ հիմնական գործառույթները՝

-Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում, որը կարևորագույն գործառույթներից է՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, և ունի շարունակական բնույթ:

-Լիցենզավորում, որը թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն:

-Սակագնային քաղաքականություն, որը նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

-Կարգավորվող ընկերությունների ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծություն, ինչը հիմք է հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար:

Ինչպես նաև՝

-իրականացնում է իր կողմից ընդունված որոշումների կատարման (պահպանման) նկատմամբ վերահսկողություն,

-ապահովում է իր և իր կողմից կարգավորվող գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, ինտերնետային կայքի միջոցով,

-կատարում է հրապարակային բացատրական աշխատանք՝ օրենքի դրույթներով սահմանված պատասխանատվության մասին հասարակությանն իրազեկ դարձնելու նպատակով,

-իրականացնում է իր իրավասությանը վերապահված այլ գործողություններ:

Էներգետիկայի բնագավառ

Այս բնագավառն ընդգրկում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերը:

2009 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ այս բնագավառի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ 2009 թվականի ընթացքում ընդունվել է 21 որոշում:

Հատկապես ուշադրություն է դարձվել լիցենզավորման գործընթացին, լիցենզավորման համապատասխան կարգերի մշակմանը, բնագավառում լիցենզավորված անձանց լիցենզիաների անբաժանելի մաս կազմող պայմանների սահմանմանը, լիցենզավորված

անձանց կողմից մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկաների ընդունմանը, Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման վերահսկողությամբ և այլն:

Էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավորվող ընկերություններն են՝

«Արցախէներգո» ՓԲ Ընկերությունը. 2009 թվականի ընթացքում Հանձնաժողովի համապատասխան որոշումներով (հունվարի 30-ի թիվ 5Ա և մայիսի 7-ի թիվ 37Ա որոշումներ) սահմանվել են Ընկերության կողմից իրականացվող էլեկտրական էներգիայի բաշխման(ԷԲ-04) և հաղորդման(ԷԲ-05) գործունեությունների լիցենզիաների պայմանները:

Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ (մարտի 2-ի թիվ 13Ն որոշում) վերանայվել են Ընկերության էլեկտրական էներգիայի հաղորդման և բաշխման ծառայությունների մատուցման սակագները:

Հանձնաժողով ներկայացված ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծության արդյունքում պարզվել է, որ Ընկերությունը 2009 թվականի երեք եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) կտրվածքով աշխատել է շահույթով (առաջին եռամսյակը՝ շահույթով, երկրորդ եռամսյակը՝ վնասով, երրորդ եռամսյակը՝ շահույթով):

Ընկերության էլեկտրամատակարարման ընդհատումների վերաբերյալ տեղեկատվության համաձայն՝ հատկապես շատ են ընդհատումները Մարտակերտի, Շուշիի և Ասկերանի շրջաններում, ինչը ենթադրում է, որ Ընկերությունը պետք է ներդրումներ կատարի այս ուղղությամբ:

2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել՝ 9 100 հազ.դրամ պետական տուրք, 7 210 429.56 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 2 403 476.52 դրամ պարտադիր վճար:

«ԱրցախՅԷԿ» ԲԲ Ընկերությունը. Ընկերության կողմից ներկայացված 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծության արդյունքների համաձայն՝ Ընկերությունը 2009 թվականի երեք եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) կտրվածքով աշխատել է շահույթով (առաջին եռամսյակը՝ շահույթով, երկրորդ եռամսյակը՝ շահույթով, երրորդ եռամսյակը՝ շահույթով): Ընկերության կողմից իրականացվում են մի շարք փոքր ՅԷԿ-երի կառուցման աշխատանքներ, սակայն լիցենզավորման համար հայտերի ներկայացման գործընթացը դանդաղում է:

2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել՝ 2 000 000 դրամ պետական տուրք, 1 920 533.48 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 640 177.83 դրամ պարտադիր վճար:

Գազամատակարարման համակարգի կարգավորվող ընկերությունն է՝

«Արցախգազ» ՓԲ Ընկերությունը. 2009 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից սահմանվել են Ընկերության բնական գազի փոխադրման (ԷԲ-10), բաշխման (ԷԲ-11) և ներկրման (ԷԲ-12) լիցենզիաների պայմանները (համապատասխանաբար՝ 2009 թվականի հունվարի 30-ի թիվ 6Ա, փետրվարի 19-ի թիվ 9ԱԳ և մարտի 18-ի թիվ 16Ա որոշումներով):

Հանձնաժողովի կողմից վերանայվել և համապատասխան որոշմամբ (մարտի 2-ի թիվ 12Ն որոշում) սահմանվել է Ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը:

Ընկերության կողմից ներկայացված 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծության արդյունքների համաձայն՝ Ընկերությունը 2009 թվականի երեք եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) կտրվածքով աշխատել է վնասով (առաջին եռամսյակը՝ շահույթով, երկրորդ եռամսյակը՝ վնասով, երրորդ եռամսյակը՝ վնասով):

2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել՝ 3 000 000 դրամ պետական տուրք, 4 511 653.23 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 1 503 884.41 դրամ պարտադիր վճար:

Ձերմամատակարարման համակարգի կարգավորվող ընկերությունն է՝

«Ձերմային տնտեսություն» ՓԲ Ընկերությունը. Հանձնաժողովի 2008 թվականի թիվ 66Ն որոշմամբ սահմանվել է Ընկերության ջեռուցման սակագին, որը վերանայվել է Հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 61Ն որոշմամբ:

Ընկերության կողմից ներկայացված 2008-09 թվականների ջեռուցման սեզոնի ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքների համաձայն՝ Ընկերությունն աշխատել է շահույթով:

2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել՝ 150 000 դրամ պետական տուրք, 195 883.87 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 65 294.63 դրամ պարտադիր վճար:

Ջրային համակարգ

Ջրային համակարգի կարգավորվող ընկերություններն են՝

«Ջրային տնտեսություն» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է ոռոգման ջրի մատակարարման գործունեություն Ասկերան և Մարտակերտ քաղաքներում:

«Ասկերանի կոմունալ տնտեսություն» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գործունեություն Ասկերան քաղաքում:

«Ճարտարի ջրամատակարարման ցանց» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է խմելու ջրի մատակարարման գործունեություն Մարտունու շրջանի ճարտար գյուղում:

«Մարտունու կոմունալ տնտեսություն» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գործունեություն Մարտունու քաղաքում:

«Ջրմուղ-կոյուղի» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գործունեություն Ստեփանակերտ քաղաքում:

«Հադրուբի կոմունալ տնտեսություն» ՓԲ Ընկերությունը. իրականացնում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման գործունեություն Հադրուբ քաղաքում:

Վերջին չորս ընկերությունները ջրային համակարգի օգտագործման թույլտվությունները ստացել են 2009 թվականի ընթացքում:

Ներկայումս աշխատանքներ են տարվում առանց ջրային համակարգի օգտագործման թույլտվության գործող ընկերություններին դաշտ բերելու ուղղությամբ:

2009 թվականի ընթացքում Ջրային համակարգի կարգավորվող ընկերությունների կողմից պետական բյուջե է վճարվել՝ 50 000 դրամ պետական տուրք, 325 156.77 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 10 000 դրամ պետական տուրք, 108 385.59 դրամ պարտադիր վճար:

Ընդհանրապես ջրային ոլորտում առկա են որոշ խնդիրներ, որոնք պատշաճ լուծում են պահանջում:

ԼՂՀ ջրային օրենսգրքի համաձայն՝ սակագնային քաղաքականությունը և ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրումն իրականացնում է Հանձնաժողովը: Սակայն, հարկ է նշել, որ ջրային օրենսգրքում առկա թերություններն ու բացթողումներն էապես խոչընդոտում են արդյունավետ և ամբողջական կարգավորման իրականացումը: Մասնավորապես, ջրային համակարգում կարգավորող մարմնին վերապահված իրավասությունների չափից ավելի ընդհանուր և ոչ հստակ սահմանումը, ոլորտում սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռման հիմնարար սկզբունքի ապահովման համար կարգավորող մարմնի անհրաժեշտ լիազորությունների բացակայությունը (ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի օրինակելի ձևերի և խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների սահմանում), կարգավորվող անձանց գործունեության վերահսկման գործուն լծակների, ինչպես նաև վերջիններիս կողմից իրավախախտ վարքագծի դրսևորման դեպքերում տույժեր և տուգանքներ կիրառելու իրավասությունների բացակայությունը և այլն: Այս հանգամանքն իր հերթին խնդիրներ է ստեղծում Հանձնաժողովը - կարգավորվող փոխհարաբերություններում. կարգավորվողների անլուրջ վերաբերմունքը Հանձնաժողովին վերապահված իրավասություններին, Հանձնաժողովի կողմից ընդունված՝ ոլորտին վերաբերող իրավական ակտերի պահանջներին իրազեկության ցածր մակարդակը, ֆինանսական

հաշվետվությունների և տեխնիկական տեղեկատվությունների ներկայացման ժամկետների խախտումները, ներկայացված հաշվետվություններում Հանձնաժողովի կողմից սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների և բացթողումների առկայությունը և այլն:

Ջրային ոլորտում կարգավորման ենթակա սակագների առումով նույնպես կան խնդիրներ պայմանավորված նրանով, որ ոլորտում գործում են ոչ հստակ սակագներ: Այս և վերոնշյալ մյուս խնդիրների լուծման ուղղությամբ Հանձնաժողովը հետևողականություն կցուցաբերի:

Հեռահաղորդակցության (այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի) բնագավառ

Այս բնագավառն իր բազմաբնույթ խնդիրներով շարունակում է Հանձնաժողովի գործունեության մեջ մնալ որպես գերակա ուղղություն:

Հանձնաժողովի ստեղծման պահից հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության, հեռուստատեսության և ռադիոյի) բնագավառում կատարվել են մեծածավալ աշխատանքներ «էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքներով Հանձնաժողովին վերապահված գործառույթներն իրականացնելու համար:

Ընդունվել են թվով 40 որոշումներ, որոնցից 15-ը նորմատիվ են, 24-ը՝ անհատական, և 1-ը՝ լոկալ: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրվել է տվյալների հաղորդման և հնտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 22 լիցենզիա:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում տրվել է ռադիոհաղորդումների էթերային հեռարձակման 6 լիցենզիա:

Չնայած այն հանգամանքին, որ «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքը գործում է 2006 թվականից՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների մասշտաբային տրամադրման, ինչպես նաև միանվագ և օգտագործման տարեկան վճարների գանձման գործընթացը սկսվել է Հանձնաժողովի ստեղծման պահից: Հանձնաժողովի կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություններ (25 թույլտվություն) են տրամադրվել 23 տնտեսվարող սուբյեկտի:

2009 թվականի ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի լիցենզավորված ընկերությունների կողմից պետական բյուջե է վճարվել ընդամենը **129 999 863** դրամ (առանց կարգավորման վճարների՝ **118 458 630** դրամ)։

- **2 056 400** դրամ՝ պետական տուրք (ներառյալ պետական տուրքի ուշացման համար գանձված տույժերը՝ 181 400 դրամ), մինչև տարվա վերջ պետք է վճարվի **220 000** դրամ:

- **380 000 դրամ**՝ լիցենզային վճար (հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում լիցենզավորված ընկերությունների կողմից վճարված),

- **116 022 230** դրամ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրան և ռադիոհաճախականությունների օգտագործման տարեկան վճար, որը մինչև տարվա վերջ պետք է կազմի **266 410 240** դրամ, այսինքն մինչև տարվա վերջ պետք է վճարվի **150 388 010** դրամ:

- **11 541 232 . 56** դրամ՝ պարտադիր վճար, որը մինչև տարվա վերջ պետք է կազմի **15 388 310.08** դրամ, այսինքն մինչև տարվա վերջ պետք է վճարվի **3 847 077.52** դրամ:

Հարկ է նշել, որ ռադիոհաճախականությունների հատկացման գործընթացը կազմակերպելու ընթացքում Հանձնաժողովը հանդիպում է որոշակի խոչընդոտների.

1. «էլեկտրոնային հաղորդակցության մասին» ԼՂՀ օրենքի համաձայն՝ իրավասու մարմնի (ԼՂՀ ԿԱ արտադրական ենթակառուցվածքների վարչություն) գործառույթներն են՝

- հայտնաբերել և տեղորոշել ճառագայթվող այն ռադիոհեռարձակման աղբյուրները, որոնք չեն համապատասխանում օրենքին կամ օրենսդրության այլ պահանջներին.

- համապատասխան թույլտվության առկայության դեպքում ուսումնասիրել և ստուգել ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործումը:

Սակայն տեխնիկական հնարավորությունների բացակայության պատճառով այդ գործառնությունները չեն կատարվում: Հանձնաժողովի կողմից տրված ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություններ ունեցող կազմակերպությունների ներկայացրած բողոքների համաձայն՝ ռադիոկապի ցանցի (շարժական) կազմակերպման ընթացքում տեղի են ունենում բազմաբնույթ խանգարումներ: Այս հանգամանքն իր հերթին դժվարություններ է առաջացնում ռադիոհաճախականության օգտագործման տարեկան վճարների պետական բյուջե գանձման հետ կապված, ինչպես նաև Թույլտվություն ունեցող անձանց և Հանձնաժողովի փոխհարաբերություններում:

2. Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն ունեցող ցանկացած անձ պարտավոր է Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված շարժական ռադիոկապի ցանցի տեխնիկական նախագիծ: Սակայն ԼՂՀ-ում չկան կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձինք, իսկ ՀՀ-ում նախագիծը պատրաստելու համար պահանջվում են զգալի գումարներ: Հետևաբար, անհրաժեշտ է ԼՂՀ Կառավարության միջամտությունը կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզավորման գործընթացը կազմակերպելու կապակցությամբ:

Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորվողներից առանձնակի հարկ է նշել **«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲ Ընկերությանը**, քանի որ այն զբաղեցնում է մենաշնորհ դիրք՝ «Ամրակցված հեռախոսակապի ծառայություններ» և «Բջջային կապի ծառայություններ» ապրանքային շուկաներում, ու գերիշխող դիրք՝ «Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ» ապրանքային շուկայում:

Հանձնաժողովի համապատասխան որոշմամբ հաստատված ձևերով «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲ Ընկերության կողմից Հանձնաժողով են ներկայացվում եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Կատարվում է ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն: Վերլուծության արդյունքների համաձայն՝ Ընկերությունը 2009 թվականի երեք եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) կտրվածքով աշխատել է վնասով (առաջին եռամսյակը՝ վնասով, երկրորդ եռամսյակը՝ շահույթով, երրորդ եռամսյակը՝ վնասով):

Հանձնաժողովը հանրային ծառայությունների սակագների կարգավորման առումով վարում է նպատակադրված քաղաքականություն՝ ուղղված այն բանին, որ սակագներն առավելագույնս մոտեցվեն փաստացի ծախսերին, ինչի համար խրախուսում է սակագների վերամայումը: Էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ակնառու է մատուցվող ծառայությունների կարգավորման ենթակա սակագների նվազեցման միտումը: Հանձնաժողովը սակայն հետևողականություն է դրսևորում Ընկերության կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման, և հատկապես՝ արագագործ ինտերնետային ծառայությունների հասանելիության մատչելիության ապահովման ուղղությամբ:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառ

Այս բնագավառում ծագող հարաբերությունները Հանձնաժողովը կարգավորում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ԼՂՀ օրենքով և իր ընդունած իրավական ակտերով: 2009 թվականի ընթացքում ընդունվել է 14 որոշում, որոնցով մի շարք ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտներից պահանջվել են անհրաժեշտ տեղեկատվություններ այդ շուկաներն ուննասիրելու, նրանցում տիրող մրցակցային իրավիճակը գնահատելու նպատակով: Այդ որոշումների ընդունմամբ Հանձնաժողովն ուսումնասիրության է վերցրել հետևյալ ապրանքային շուկաները՝

- «Ցորենի ալյուր»,
- «Պարենային ցորեն»,
- «Բրինձ»,
- «Շաքար»,
- «Շաքարավազ»,
- «Կարագ»,
- «Բուսական յուղ»,
- «Դեղորայք»,
- «Կենցաղային տեխնիկա»,

«Բանկեր»:

Դեռևս 2008 թվականին համապատասխան որոշմամբ Հանձնաժողովի կողմից ուսումնասիրության էր վերցվել «Հաց» ապրանքային շուկան:

Մոնիթորինգներ են իրականացվել բացի նշված շուկաներից նաև մի շարք այլ ապրանքային շուկաներում՝ նսամթերք, կենդանի ձուկ, սառեցված ձուկ, կաթ, կաթնաշոռ, թեյ, սուրճ, մանկական սնունդ և խնամքի պարագաներ, կենցաղային պարագաներ՝ վացքի փոշի, օճառ և ատամի մածուկ, գրենական պիտույքներ, հագուստ, կոշիկ և այլն: Աշխատանքների ընթացքում ուշադրությունը բևեռվել է պարենային ապրանքների շուկաների, հատկապես «Հաց» ապրանքային շուկայի ուսումնասիրությանը:

Կատարվել է ներկայացված տեղեկատվությունների և մոնիթորինգների արդյունքների համեմատություն՝ գների առունով, վերլուծություն, և ստացվել է մոտավոր պատկեր ապրանքային շուկաների վերաբերյալ: Հանձնաժողովը շարունակում է ուսումնասիրությունները՝ ապրանքային շուկաներում տիրող մրցակցային իրավիճակի ավելի ճշգրիտ գնահատական տալու համար:

Փոստային կապի բնագավառ

Այս բնագավառի կարգավորվող ընկերությունն է՝

«Արցախփոստ» ՓԲ Ընկերությունը. Ընկերության կողմից ներկայացված 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունների և տեխնիկատնտեսական տեղեկատվությունների վերլուծության արդյունքների համաձայն՝ Ընկերությունը 2009 թվականի երեք եռամսյակների (հունվար-սեպտեմբեր) կտրվածքով աշխատել է շահույթով (առաջին և երկրորդ եռամսյակները՝ շահույթով, երրորդ եռամսյակը՝ վնասով):

2009 թվականի ընթացքում Ընկերության կողմից պետական բյուջե է վճարվել՝ 40 779.33 դրամ պարտադիր վճար, և մինչև տարվա վերջ վճարվելու է 300 000 դրամ պետական տուրք, 13 593.11 դրամ պարտադիր վճար:

«Փոստային կապի մասին» ԼՂՀ օրենքի 18¹-րդ հոդվածի համաձայն՝ ԼՂՀ-ում փոստային կապի ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները սահմանում և վերանայում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը: Սակայն Հանձնաժողովի կողմից սակագները դեռևս չեն վերանայվել:

Բնագավառում առկա են որոշ խնդիրներ, մասնավորապես, նամակագրական թղթակցության՝ փոստարկղերից հավաքման հաճախականության և փոստային առաքանիների անցման ժամկետների խախտման հետ կապված: Հանձնաժողովը այդ խնդիրների լուծման ուղղությամբ ևս քայլեր կձեռնարկի:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ

Այս բնագավառը Հանձնաժողովի կարգավորման տակ է միայն սակագների սահմանման և վերանայման մասով: 2009 թվականի մայիսի 7-ին Հանձնաժողովի կողմից ընդունվել է «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» թիվ 36Ն որոշումը: Այդ կարգով սահմանվում է տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման գործընթացը: Սակայն Հանձնաժողովի կողմից այս բնագավառում ևս սակագներ չեն սահմանվել:

Ամփոփում

Ավարտելով սույն Ծրագրի՝ հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությանը և հիմնախնդիրների բացահայտմանը նվիրված բաժինը՝ որպես վերջաբան նշենք, որ կարգավորման իրավական դաշտը 2009 թվականի ընթացքում (մինչև

ս.թ.նոյեմբերի 12-ը) համալրվել է 71 իրավական ակտով՝

- 20 նորմատիվ իրավական ակտ,
- 49 անհատական (ոչ նորմատիվ) իրավական ակտ,
- 2 լոկալ (ներքին) իրավական ակտ:

Իսկ **ԼՂՀ** պետական բյուջեի մուտքերի վերաբերյալ՝ ըստ կարգավորվող բնագավառների ներկայացված տվյալներն ընդհանրացնելու համար ընդգծենք, որ 2009 թվականի ընթացքում **ԼՂՀ** պետական բյուջե ընդհանուր առմամբ մուծվել է **158 870 194** դրամ՝

- **25 811 564.4** դրամ՝ որպես կարգավորման պարտադիր վճարներ.
- **16 656 400** դրամ՝ որպես պետական տուրք (ներառյալ տույժերը) .
- **116 022230** դրամ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և ռադիոհաճախականությունների օգտագործման տարեկան վճարներ.

• **380 000 դրամ՝** լիցենզային վճար (հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում լիցենզավորված ընկերությունների կողմից վճարված) :

Եվ մինչև տարվա վերջ նախատեսվում է **159 821 865** դրամի չափով դրամական միջոցների մուտք պետական բյուջե՝

- **8 603 854.815** դրամ՝ պարտադիր վճար,
- **830 000** դրամ՝ պետական տուրք,
- **150 388010** դրամ՝ ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և ռադիոհաճախականությունների օգտագործման տարեկան վճարներ:

Այսինքն՝ 2009 թվականի վերջին դրամական միջոցների մուտքը պետական բյուջե կկազմի **318 692 059** դրամ:

2. Կարգավորման միջոցառումները և մեխանիզմները

Կարգավորման ոլորտի իրավիճակը և գոյություն ունեցող հիմնախնդիրները թելադրում են առաջիկա տարում իրականացվելիք այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են կարգավորման դաշտը հնարավորինս կանոնակարգելու, մրցակցությունը խթանելու, տնտեսվարող սուբյեկտների համար գործարարության առավել բարենպաստ պայմաններ ստեղծելու, ապրանքային շուկաներ նոր սուբյեկտների մուտք գործելը խոչընդոտող երևույթները հայտնաբերելու և վերացնելու, օրենսդրական դաշտը կատարելագործելու, համապարփակ տեղեկատվական բազա ստեղծելու համար:

2010 թվականին կշարունակվեն **էներգետիկայի բնագավառի** կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2010 թվականի ընթացքում այս բնագավառում նախատեսվում է ընդունել ներքոնշված որոշումները՝

1.«Արցախէներգո» փակ բաժնետիրական ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվության ձևը (էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների պահանջները խախտելու համար սպառողներին վճարված տույժերի վերաբերյալ տեղեկատվության ձևը) հաստատելու մասին.

2.Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին.

3.Բնակչության սպառած էլեկտրական էներգիայի հաշվառման բազմասակագնային համակարգի անցման կարգը հաստատելու մասին.

4.Կատարված ներդրումների մասին կարգավորվող անձանց կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացվող հաշվետվության ձևերը հաստատելու մասին.

5. Բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրերի մշակման կարգը հաստատելու մասին.

6. «Արցախգազ» ՓԲԸ-ի բնական գազի բաշխիչ ցանցում տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկի և սեփական կարիքների համար օգտագործվող գազի հաշվարկի մեթոդիկաները հաստատելու մասին.

7. «Արցախգազ» ՓԲԸ-ի գնումների իրականացման սկզբունքները հաստատելու մասին.

8. «Արցախգազ» ՓԲԸ-ի գնումների կարգը և ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվությունների ձևերը հաստատելու մասին.

9. «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմանները հաստատելու մասին:

2010 թվականին նախատեսվում է տրամադրել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման գործունեության հինգ լիցենզիա: Նոր հիդրոէլեկտրակայանների գործարկումը հնարավորություն կտա բավարարել տեղական էլեկտրաէներգիայի պահանջարկի 85%-ը:

Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում կլինեն էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող հետևյալ աշխատանքները՝

ա) առևտրային հաշվառքի սարքերի (հաշվիչների) տեղադրման աշխատանքները,

բ) ըստ շրջանն երի և բնակավայրերի բնակչությանը և հիմնարկ ձեռնարկություններին էլեկտրաէներգիայի մատակարարման ընդհատումները և բնական գազի անջատումները նվազեցնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները,

գ) տեխնոլոգիական անխուսափելի կորուստների նվազեցման կապակցությամբ տարվող աշխատանքները և այլն:

Ջրային համակարգի կարգավորման առումով Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից թույլտվությունների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքին: Այդ գործընթացը շարունակական բնույթ կկրի նաև 2010 թվականին, ինչպես նաև Հանձնաժողովը մտադիր է դաշտ հրավիրել այն ընկերություններին, որոնք դեռևս ձեռք չեն բերել համակարգի օգտագործման թույլտվություն: Ներկա դրությամբ դրանք երկուսն են՝ Մարտակերտի «Կոմունալ բնակարանային» ՓԲԸ-ն և Շուշի «Բարեկարգում» ՓԲԸ-ն: Վերջիններիս բազմիցս զգուշացվել է ջրային համակարգի օգտագործման թույլտվություններ ստանալու համար դիմելու անհրաժեշտության վերաբերյալ: Ավելին, ժամանակին պատշաճ կերպով տեղեկացվել են բոլոր շրջվարչակազմերի ղեկավարները, որպեսզի կարգավորման, այդ թվում՝ լիցենզավորման ենթական գործունեությամբ զբաղվող անձինք, ներկայանան Հանձնաժողով՝ ստանալու համապատասխան լիցենզիա կամ թույլտվություն:

2010 թվականին նախատեսվում է ընդունել հետևյալ որոշումները՝

1. Խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների որակի չափանիշների սահմանման, այդ չափանիշների մոնիթորինգի կարգը և ծառայությունների մատուցման որակի չափանիշների ներդրման ու մոնիթորինգի ժամանակացույցը հաստատելու մասին.

2. «Ջրմուղ-կոյուղի» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին մատուցվող ծառայությունների սպասարկման որակին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին:

Հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառն իր բազմաբնույթ խնդիրներով հանձնաժողովի գործունեության մեջ կմնա որպես գերակա ուղղություն: 2010 թվականի ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ աշխատանքները.

- Ազատականացնել ձայնային ծառայությունների մատուցման դաշտը, այսինքն՝ դասակարգել միջազգային «ԱյՓի» (IP) տարանցման ծառայությունը և իրականացնել ձայնային ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների սակագնային կարգավորումը:

- Կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգի պարզեցում: Միջոցներ ձեռնարկել արբանյակային կապի երկրային կայանների թույլտվության տրամադրման և ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափը նվազեցնելու առումով: Վճարների նվազեցումը կխթանի ինտերնետ կապավորների քանակի ավելացմանը ԼՂՀ-ում, ինչը իր հերթին կբերի ինտերնետ կապի սակագների նվազեցման:

- Սկսել մասշտաբային աշխատանքներ ԼՂՀ ամբողջ տարածքում ռադիոհաճախականություն օգտագործող բոլոր անձանց հայտնաբերելու և օրինական դաշտ հրավիրելու կապակցությամբ:

- Միջոցառումներ ձեռնարկել ֆիքսված և բջջային կապի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների ցանկը ընդլայնելու և սակագների նվազումը ապահովելու կապակցությամբ:

Գործարար միջավայրի զարգացմանը նպաստելու նկատառումով նախատեսվում է 2010 թվականին ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների և էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում լիցենզիաների տրամադրման գործընթացների պարզեցում:

2010 թվականի ընթացքում առանձնակի ուշադրություն կդարձվի հեռավոր շրջաններում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի զարգացումը խթանող պայմանների ստեղծմանը:

2010 թվականի ընթացքում աշխատանքներ կտարվեն «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից մատուցվող սակագնային կարգավորման ենթակա հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ցանկը, ծախսերի բաշխման մեթոդաբանությունը և մատուցվող ծառայությունների սակագների հաշվարկման մեթոդիկան մշակելու և հաստատելու ուղղությամբ:

Հանձնաժողովի կողմից պետք է նաև մշտական հսկողություն կատարվի կարգավորվող ընկերությունների կողմից լիցենզիաների պայմանների պահպանման և իրավական ակտերի պահանջների կատարման ընթացքի վերաբերյալ:

Փոստային կապի բնագավառում 2010 թվականի ընթացքում աշխատանքներ կտարվեն սակագնային քաղաքականության իրականացման ուղղությամբ: Կվերահսկվի ֆինանսական հաշվետվությունների ներկայացման կարգը, դրանց հավաստիության ճշգրտությունը:

Տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում մրցակցության պաշտպանությունը իրականացնելու, տեղ գտած սահմանափակումները վերացնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հանձնաժողովը նախատեսում է 2010 թվականի ընթացքում շարունակել իրականացվող աշխատանքները և ուսումնասիրել նաև հետևյալ ապրանքային և ծառայությունների շուկաները՝

1. Կարագ.
2. Շաքար, շաքարավազ.
3. Միս, մսամթերք.
4. Կաթ, կաթնամթերք՝ մածուկ, կաթնաշոռ, թթվասեր և այլն.
5. Բրինձ.
6. Թեյ.
7. Դեղորայք.
8. Կենցաղային պարագաներ՝ լվացքի փոշի, օճառ, ատամի մածուկ և այլն.
9. Կենցաղային տեխնիկա.
10. Ասֆալտապատում.
11. Բենզին.
12. Դիզելային վառելիք.
13. Ավտոտրանսպորտային միջոցների գազալցման ծառայություններ.
14. Տաքսի ծառայություններ.
15. Երթուղային տաքսիներ.
16. Բանկեր:

Հանձնաժողովի կողմից արդեն ուսումնասիրության վերցված «Հաց», «Ցորենի ալյուր» և «Պարենային ցորեն» ապրանքային շուկաները նույնպես կմանան ուշադրության կենտրոնում:

Ապրանքային շուկաների ուսումնասիրության նպատակն է վերլուծել շուկաներում տիրող մրցակցային իրավիճակը և բացահայտել օրենքով չթույլատրված գործողությունները.

- հակամրցակցային համաձայնությունները,
- գերիշխող դիրքի չարաշահումները,
- արգելված համակենտրոնացումները,
- անբարեխիղճ մրցակցությունը:

Նշված խնդիրներն իրագործելու համար շուկաների ուսումնասիրության ընթացքում պետք է որոշվեն.

-ապրանքային շուկաների ծավալները, ապրանքային և աշխարհագրական սահմանները,

-շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտները, համապատասխան շուկայում նրանց գրաված դիրքը,

-շուկայական իշխանություն ունեցող տնտեսվարող սուբյեկտների ազդեցության հետևանքները տվյալ ապրանքային շուկայի վրա,

-շուկաների կենտրոնացվածության աստիճանը, շուկա մուտք գործելու խոչընդոտները,

-պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության ազդեցությունն այդ շուկաների վրա և այլն:

Ուսումնասիրության ընթացքում հատուկ ուշադրություն կդարձվի տնտեսվարող սուբյեկտների միջև **հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերմանը**: Նման համաձայնությունների հայտնաբերմանը, կանխարգելմանը, սահմանափակմանն ու արգելմանն ուղղված հիմնական միջոցառումներն են.

-ապրանքային շուկաներում գործող գների ուսումնասիրությունը,

-իրացման կամ ձեռքբերման ծավալներով, ապրանքների տեսականիով, սպառողների կամ նատակարարների խմբերով, ինչպես նաև տարածքային սկզբունքով շուկայի բաժանման դրսևորումների բացահայտումը,

-տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու խոչընդոտների հայտնաբերումը և վերացումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակամրցակցային համաձայնությունները (այդ թվում՝ համաձայնեցված գործողությունները) հիմնականում կայացվում են բանավոր պայմանավորվածությունների հիման վրա, դրանց բացահայտումը և այդ փաստերի ապացուցման հնարավորությունը կապված է դժվարությունների հետ:

Առաջիկա տարվա ընթացքում Հանձնաժողովը շարունակելու է ապրանքային շուկաների հետազոտության միջոցով բացահայտել **գերիշխող դիրք** ունեցող տնտեսվարող սուբյեկտներին և վարել դրանց կենտրոնացված ռեստորը: Այստեղ Հանձնաժողովի գլխավոր խնդիրն է թույլ չտալ, որպեսզի գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները չարաշահեն իրենց զբաղեցրած դիրքը:

Գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից այդ դիրքի չարաշահման կանխարգելման, նախագուշացման և սահմանափակման համար նախատեսվող միջոցառումներն են՝

-գերիշխող դիրք գրավող տնտեսվարող սուբյեկտների բացահայտում և ռեստորի վարում,

-գերիշխող ճանաչված տնտեսվարող սուբյեկտների գործունեության հետազոտում,

-չարաշահումների բացահայտում և վերացում,

-շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացմանն ուղղված քաղաքականության իրականացում:

Համակենտրոնացումների, որոնք հիմնականում արտահայտվում են տնտեսվարող սուբյեկտների միաձուլմանը, մեկ սուբյեկտի կողմից այլ տնտեսվարող սուբյեկտների միջոցների կամ փայաբաժնի ձեռք բերմանը, բացահայտման և կարգավորման համար Հանձնաժողովը կիրականացնի հետևյալ միջոցառումները.

-մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության համակարգման նպատակով տնտեսվարող սուբյեկտների միավորման արդյունքում ստեղծվող կազմակերպությունների նկատմամբ վերահսկողության իրականացում,

-տարբեր ապրանքային շուկաներում համակենտրոնացումների բացահայտում, շուկայի վրա դրանց ազդեցության հետազոտում,

-գործողության մեջ դրված արգելված համակենտրոնացումների հայտնաբերում ու լուծարում:

Անբարեխիղճ մրցակցության, որը դրսևորվում է տնտեսվարող սուբյեկտի կամ նրա գործունեության նկատմամբ շփոթություն առաջացնելու, սուբյեկտին կամ նրա գործունեությունը վարկաբեկելու, հասարակությանը մոլորեցնելու, տնտեսվարող սուբյեկտների համբավին, վարկարժեքին վնասելու մեջ, բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովը, լիազորված և շահագրգիռ այլ մարմինների հետ համատեղ վերահսկելու է

ապրանքային նշանների կեղծման, նմանակման, ֆիրմային անվանումների ապօրինի օգտագործման և ազնվության, բարեխղճության, արդարության սկզբունքների խախտումների դրսևորումները:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառում ևս կձեռնարկվեն կարգավորման գործառույթների իրականացմանն ուղղված միջոցառումներ, սահմանված կարգով կսկսվի տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների և դրանց կցորդների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման ու վերանայման գործընթացը:

Կարգավորման միջոցառումները

Հանձնաժողովի կողմից իրականացվելիք՝ հանրային ծառայությունների կարգավորմանը և տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների ցանկում ներկայացված են առաջարկվող միջոցառումների անվանումները (աղյուսակ):

Աղյուսակ

Միջոցառումների ցանկ
Հանրային ծառայությունների մասով՝
1. Կարգավորման գործառույթների իրականացումն ապահովող իրավական դաշտի համալրում
2. Լիցենզավորման գործառույթի իրականացում՝ լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվող անձանց բացահայտում, լիցենզիաների տրամադրում, լիցենզիաների պայմանների կատարման ապահովում, վերահսկողություն
3. Նպատակաուղղված սակագնային քաղաքականության վարում
4. Կարգավորվողների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն
5. Ներդրումային ծրագրերի ուսումնասիրում, համաձայնեցում
Տնտեսական մրցակցության պաշտպանության մասով՝
6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծում՝ օգտագործելով խոշոր հարկատուների ցանկի տվյալները
7. Ապրանքային և ծառայությունների շուկաների ուսումնասիրություն և վերլուծություն (հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաչափում, օրենքով արգելված համակենտոնացումներ և անբարեխիղճ մրցակցություն)
8. Ապրանքային շուկաների տնտեսական մրցակցության իրավիճակի գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ստեղծում և ընդլայնում
9. Տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծություն՝ բնակչության կողմից սպառման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքների ապրանքային շուկաներում տնտեսական մրցակցության իրավիճակի շարունակական դիտանցում և գնահատում
10. Հակամրցակցային համաձայնությունների հայտնաբերում և դադարեցում.
• իրացման կամ ձեռքբերման խտրական և (կամ) տարբերակված գների հայտնաբերմանն ուղղված դիտանցում և գնահատում
• ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման բացահայտմանն ուղղված դիտանցում և գնահատում
• միևնույն ապրանքային շուկայի որոշակի տարածքներում, որոշակի ծավալներով, տեսականիով, սպառողների կամ մատակարարների խմբերով ապրանքների շրջանառության սահմանափակման դեպքերի ուսումնասիրություն
• համաձայնեցված գործողությունների արդյունքում տնտեսվարող սուբյեկտների կողմից շուկայի մուտքի խոչընդոտների կամ շուկայից տնտեսվարող սուբյեկտներին դուրս մղելու փաստերի և այլ գործողությունների բացահայտմանն ուղղված ուսումնասիրություն
11. Տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության պարզում, տնտեսվարող սուբյեկտի փաստացի գործունեության բացահայտում: Օրենքով սահմանված կարգով հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման իրականացում
12. Հասարակության տեղեկացվածության բարձրացում.
• զանգվածային լրատվության միջոցներով Հանձնաժողովի աշխատանքների պարբերական լուսաբանում
• զանգվածային լրատվության միջոցներով օրենքի դրույթների մեկնաբանությունների ներկայացում

Նշված միջոցառումներից բացի Հանձնաժողովը կշարունակի աշխատանքները հետևյալ ուղղություններով՝

1. Սպառողների հետ տարվող աշխատանքներ.

Հանձնաժողովը, ղեկավարվելով ԼԴՀ համապատասխան օրենքներով, անհրաժեշտ քայլեր կձեռնարկի սպառողների և կարգավորվող ընկերությունների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ուղղությամբ:

Կարգավորվող անձանց հետ համատեղ, հասարակական կազմակերպությունների ու սպառողների մասնակցությամբ, պարբերաբար քննարկումներ կկազմակերպվեն սպառողների հարցադրումների և բողոքների վերաբերյալ:

2. Աշխատանք զանգվածային լրատվամիջոցների հետ.

2009 թվականին Հանձնաժողովը ջանքեր կգործադրի թափանցիկ և հրապարակային գործունեության, զանգվածային լրատվամիջոցների հետ սերտ համագործակցության ճանապարհով նպաստելու հանրության իրազեկության աստիճանի բարձրացմանը, յուրաքանչյուր քաղաքացու տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացմանը: Հանձնաժողովը պաշտոնական ինտերնետային կայքով, թերթերով, հեռուստատեսությամբ կժանուցի Հանձնաժողովի նիստերի մասին, իսկ դրանց ավարտից հետո կմեկնաբանվեն ընդունված որոշումները, լրագրողների համար կկազմակերպվեն ճեպագրույցներ:

3. Համագործակցություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետությունը պայմանավորված է աշխատակազմի մասնագիտական որակավորմամբ: Որակյալ մասնագետներով Հանձնաժողովի աշխատակազմը համալրելու և աշխատակազմի մասնագիտական որակավորումը բարձրացնելու, միջազգային փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով Հանձնաժողովը 2010 թվականին կիրականացնի իր մասնագետների ուսուցման ու վերապատրաստման գործընթացներ, ինչպես նաև կհամագործակցի ՀՀ համապատասխան կարգավորող մարմինների և այլ պետությունների կարգավորող մարմինների հետ:

Որպես գործընկերներ կհամագործակցի ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), Եվրոպական անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ), Համաշխարհային բանկի (WB), Հայաստանում և Վրաստանում Եվրոպական Հանձնաժողովի պատվիրակության (EC), ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով Հանձնաժողովի (UNCTAD), Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոնի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության մրցակցային հարցերով Բուդապեշտի տարածքային կենտրոնի (OECD & RCC OECD) հետ:

Կարգավորման մեխանիզմները

Հանրային ծառայությունների կարգավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, բացի օրենսդրությամբ ամրագրված գործառույթներից, Ծրագիրն իրականացվում է նաև կարգավորման հետևյալ մեխանիզմների կիրառմամբ.

1. Կարգավորվող ոլորտում հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտի կարգավորման մասին օրենսդրության պահանջների խախտումների վերաբերյալ հանրության կողմից Հանձնաժողովին դիմելու նպաստավոր պայմանների և վստահության մթնոլորտի ձևավորում՝ խախտումների վերաբերյալ ստացված դիմումներին, ահազանգերին, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին օպերատիվ արձագանքման միջոցով:

2. Կարգավորման մասին օրենսդրության պահանջների խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառման անխուսափելիության մթնոլորտի ձևավորում:

3. Պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային ծառայությունների կարգավորման և տնտեսական մրցակցության հարցերին առնչվող՝ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունների ներկայացում:

4. Համագործակցություն՝

- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ,
- համապատասխան հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ,

որոնց նպատակն է տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ձևավորումը:

5. Հանձնաժողովի գործունեության թափանցիկության ապահովում՝ պաշտոնական ինտերնետային կայքի սպասարկման, ՁԼՄ-ների հետ համագործակցության, կարգավորման մասին օրենսդրության պահանջների, դրանց չկատարման, խախտման հետևանքների, Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների, քննարկվող հարցերի, ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրային և օպերատիվ ուսումնասիրությունների, դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման միջոցով:

3. Օրենքով սահմանված խնդիրների և գործառույթների իրականացման համար անհրաժեշտ այլ դրույթներ

Հանձնաժողովի բնականոն աշխատանքն ապահովելու, ինչպես նաև Հանձնաժողովի անկախության մակարդակը բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» ԼԴՀ օրենքը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքի դրույթներին: ՀՀ օրենքով մշակված է այնպիսի մի մեխանիզմ, որը թույլ է տալիս հիմնական ներդրումը կատարել մարդկային ռեսուրսի վրա, ինչի արդյունքում ստեղծվել է ուժեղ և բանիմաց կոլեկտիվ, որն ի վիճակի է իրականացնել պետական քաղաքականությունն այդ բնագավառում: ՀՀ «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված է Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի անհամեմատ բարձր աշխատավարձ: Այդ հանգամանքը բարձր պատասխանատվություն է առաջացնում աշխատակիցների մեջ, կասեցնում է որակյալ մասնագետների արտահոսքը Հանձնաժողովից, ավելացնում մարդկային ռեսուրսի վրա կատարված ներդրումների արդյունավետությունը: Իսկ մեզ մոտ պատկերն այլ է: Հանձնաժողովի աշխատակիցների համար օրենքով սահմանված է անհամեմատ ցածր աշխատավարձ, չնայած այն հանգամանքին, որ Հանձնաժողովի պահպանման ծախսերի 70%-ը գոյանում է կարգավորման պարտադիր վճարներից, այսինքն՝ Հանձնաժողովը պետական բյուջեի վրա գրեթե չի ծանրանում: Աշխատակազմի աշխատակիցները քաղծառայողներ չեն, ուստի և չկա աշխատավարձերի տարեկան բնական աճ, իսկ աշխատավարձը դա ամենակարևոր և առաջնային գործոնն է սույն և նախորդ ծրագրերում ընդգրկված աշխատանքները լիարժեք կատարելու, ընդհանրապես Հանձնաժողովին վերապահված իրավասությունների, կարգավորման գործառույթների իրականացման համար:

Հանձնաժողովի աշխատակազմի հաստիքները նույնպես անբավարար են, որպեսզի Հանձնաժողովն իրականացնի օրենքներով իրեն վերապահված իրավասությունները: Այդ կապակցությամբ Հանձնաժողովը մտադրություն ունի օրենքով սահմանված ձևով դիմելու ԼԴՀ վարչապետին, որպեսզի Հանձնաժողովի աշխատակազմի հաստիքները և ստորաբաժանումների կառուցվածքը 2010 թվականից սկսած համապատասխանեցվեն Հանձնաժողովին վերապահված իրավասություններին ու գործունեության շրջանակներին:

Ընդհանրապես անհամապատասխանություն կա մեկ աշխատակցի համար՝ ըստ նորմաների նախատեսված և փաստացի հատկացված շենքային տարածքների հարաբերակցության մեջ (աղյուսակ) :

Աշխատասենյակի համարը	Աշխատակիցների թվաքանակը		Մակերեսը մ ²		1 աշխատակցի զբաղեցրած մակերեսը մ ²		Տարբերությունը
	փաստացի զբաղեցրած	ըստ նորմայի	ըստ նորմայի	փաստացի	ըստ նորմայի	փաստացի	
Սենյակ 1 /Ղեկավարի աշխատասենյակ/	1	1	36	14,7	14,7		21,3
Սենյակ 2	4	3	16	14,7	4	3,68	1,3
Սենյակ 3	5	5	20	12,6	4	2,52	7,4
Սենյակ 4	3	3	12	8,9	4	2,97	3,1
Սենյակ 6	6	5	24	15,7	4	2,62	8,3
Սենյակ 7	6	5	24	18,5	4	3,08	5,5
Ղեկավարի տեղակալի աշխատասենյակ		1	18		18		18
Ղեկավարի ընդունարան		1	12		12		12
Ղեկավարի տեղակալի ընդունարան		1	12		12		12
Դահլիճ			100				100
ԸՆդամենը	25	25	274	85,1			188,9

Ծանոթություն* պահանջվող մակերեսը՝ 274 մ²
 փաստացի զբաղեցրած մակերեսը՝ 85.1 մ²
 Տարբերությունը՝ 188.9 մ²

Ընդամենը՝ 27 հաստիք, որից հավաքարարի և վարորդի հաստիքները հաշվարկի մեջ չեն ընդգրկվել:

Աղյուսակում բերված տվյալներից ակնհայտ է դառնում, որ Հանձնաժողովն ունի շենքային պայմանների լուրջ խնդիր: Շենքային պայմանները չեն համապատասխանում Հանձնաժողովի գործունեության բնույթին, մասնավորապես բացակայում է նիստերի անցկացման դահլիճը: Հանձնաժողովը հրավիրված նիստերի հրապարակայնությունը և թափանցիկությունը ապահովելու համար նիստերը հրավիրում է Հանձնաժողովին հատկացված շենքի սահմաններից դուրս, ինչը դժվարություններ ու անհարմարություններ է ստեղծում: Այդ դժվարությունները նաև պայմանավորված են նրանով, որ Հանձնաժողովի աշխատակազմի հաշվեկշռում առկա է մեկ միավոր մարդատար ավտոմեքենա, սակայն Հանձնաժողովի գործառույթների լիարժեք կատարման, հատկապես մոնիթորինգների, դիտանցումների և ստուգումների իրականացման ժամանակ մեկ փոխադրամիջոցը բավարար չէ. անհրաժեշտ է առնվազն երկու ավտոմեքենա: Նշված խնդիրները հրատապ լուծում են պահանջում, քանի որ դրանք ուղղակիորեն անդրադառնում են Հանձնաժողովի կողմից իրականացվող աշխատանքների որակին և արդյունավետությանը:

Հետևաբար, եզրակացությունը մեկն է՝ որպեսզի հանրային ծառայությունների կարգավորումը և տնտեսական մրցակցության պաշտպանությունը, որոնք սահմանադրորեն ամրագրված դրույթներ են, Հանձնաժողովի կողմից լիարժեք կատարվեն, ինչպես նաև բարձրանա մրցակցության պաշտպանվածության մակարդակը, անհրաժեշտ է՝ հաստիքների ավելացում, աշխատավարձերի բարձրացում և շենքային պայմանների համապատասխանեցում Հանձնաժողովի գործունեության բնույթին: Այս առումով տեղին է հաշվի առնել, որ Հանձնաժողովը ուսումնասիրություններ, մոնիթորինգներ, դիտանցումներ, ստուգում և վարույթ իրականացնող մարմին է, ինչպես նաև այն, որ Հանձնաժողովի գործունեության արդյունքում ապահովվում են դրամական միջոցների զգալի մուտքեր պետական բյուջե: 2009 թվականին դրանք կկազմեն **318 692 059** դրամ:

	Պետական տուրք	Լիցենզային վճար	Ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և օգտագործման տարեկան վճար	Կարգավորման պարտադիր վճար	Ընդամենը
Մուծված	16 656 400 (ներառյալ տույժերը)	380 000	116 022 230	25 811 564	158 870 194
Մուծվելիք	830 000	-	150 388 010	8 603 855	159 821 865
Ընդամենը	17 486 400	380 000	266 410 240	34 415 419	318 692 059

Հանձնաժողովը մտադիր է «Պարտադիր վճարների մասին» օրենքում փոփոխություն կատարելու վերաբերյալ առաջարկությամբ հանդես գալ, որպեսզի Հանձնաժողովի պահպանման ծախսերի ոչ թե 70, այլ 100 %-ն ապահովվի պարտադիր վճարներից:

Հայաստանի Հանրապետությունում ընդունված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը: Համանուն օրենքի ընդունումը անհրաժեշտություն է մեր հանրապետությունում հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության կարգավորման համար:

Նշված խնդիրների լուծումը, ինչպես նաև կարգավորման գործառույթների իրականացման համար անհրաժեշտ դրույթների ապահովումը մեծապես կնպաստեն Հանձնաժողովի սույն ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքները լավագույնս կատարելուն, իսկ դա էլ նպաստավոր պայմաններ կստեղծի ներդրումների, ինչպես նաև երկրի տնտեսության աճի համար: